

2225

29

241

U-15

1921

(89)

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ՍԱՀԱԿ ՎԵՀԱՓԱՌԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՔԱՐՈՉԸ

(ԽՍՍՈՒԱԾ 26, ԴԵԿՏ. 1920 Մ. Մ. Շ. Ա. Ի ՍՐԱՀԻՆ ՄԷՋ)



1921

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒՆ

241
U-15

241
U-15

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ
Տ. Տ. ՍԱՀԱԿ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՔԱՐՈՋԸ

(ԽՍՍՈՒԱԾ 26, ԴԵԿՏ. 1920 Մ. Մ. Շ. Ա. Ի ՍՐԱՀԻՆ ՄԷՋ)



1921



ՆԱԽԱԲԱՆ

Ներխառնողաց Քրիստոնեական Ընկերակցության Ատանայի մեջ կազմակերպված երկրորդ «Աղօթքի Եօթենակ» պաշտամունքները կատարուեցան Գեկտ. 26-ին սկսող շաբթուան ընթացքին, Ընկերակցության Օրենանին սրահին մեջ: Գործադրուած Յայտագիրը գրեթե նոյնն էր 1909 տարուան համապատասխան շաբթուան Յայտագրին հետ, երբ առաջին անգամ Ներխառնողաց Քրիստոնեական Ընկերակցության կողմէ ձեռնարկուեցաւ այսպիսի պաշտամունքի շաբթի մը:

Քարոզի նիւթերը տողորուած էին ոգեկոչումովը այն հանրագումար ցանքերուն որոնք կը յատկանշեն Ընկերակցության գործը, որ չայն համեմատութիւններ ստացաւ Ատանայի մէջ՝ Հիւրանոցի, Ընթերցասրահի, Լսարանական դասախօսութեանց, Գիշերային Վարժարանի, Մանկական Ամառնային Փեմփի և ուրիշ ձեռնարկներու ձեւին տակ որոնք մեծապէս նպաստեցին այս գործին վրայ հրաւիրելու քաղաքիս բոլոր հասարակութիւններուն ուշադրութիւնը:

Ընկերակցության պաշտօնակալներուն և բարեկամներուն համար խիստ մեծ գոհունակութիւն մը եղաւ այն պարագան որ Ն. Ս. Օժոթին Սահակ Բ., Կիլիկիոյ հայ ազգային եկեղեցւոյ Կաթողիկոսը, բարեհաճեցաւ անձամբ բանալ Աղօթքի ժողովներուն շաբթը, այդպէսով ապացուցանելով այն եղբայրական բարի կամեցողութիւնը:



37998-67

57707-46. Կ.

նը և քրիստոնեական համակրութիւնը որ սբարտի յատկանշել Գրիստոնեայ հասարակութեանց յարաբերութիւնները և որոնց յառաջացումը Ընկերակցութեան և բոլոր քրիստոնեայ գործիչներուն ջերմագին բաղձանքն եղած է միշտ :

Ինծի չիյնար գովեստն ընել այս առիթով Ն. Ս. Օծութեան խօսած քարոզին : Անիկա լաւագոյն կերպով կրնայ գնահատուիլ ուշադիր ընթերցումով մը : Անիկա կը կազմէ բրբռուն և պերճախօս կողջ մը՝ քրիստոնեական կեանքի և պաշտօնի հոգեւորական կազմին զարգացմանը համար, որմէ եկեղեցին երբ վրիպի, իրագործած պիտի չըլլայ իր գոյութեան նպատակը : Քարոզին բնաբանն էր, « ԱՀԱ ԵՍ ԱՄԷՆ ԻՆՉ ԿԸ ՆՈՐՈՒԿԵՄ » :

Յաջորդ ժողովներուն քարոզիչները միեւնոյն ոգիէն ներշնչուած էին և Կեանքի միեւնոյն տեսակետը շեշտեցին : Աւետարանական եկեղեցւոյ Հովիւը, Հայաստանեայց եկեղեցւոյ վարդապետ մը, յոյն աշխարհական մը, Ամերիկացի միսիօնար մը և Հին Ասորի (Յակորիկեան) եկեղեցւոյ քահանայ մը հետեւեցան առաջին օրինակին և միեւնոյն ոգին ի յայտ բերին : Գլխաւոր միտքը, որ իրրն ոսկեղէն բել մը բոլոր քարոզները կը կապէր իրարու, կը կազմէր նորոգուած կեանքը որ կ'արտայայտուի մաքուր սրտի բղխած հաւատաւոր անձնական ծառայութեամբ՝ ապաւինած « Տիրոջը զօրութեանը » վրայ, ներշնչելով վճռորոշումը վերականգնելու և վերաշինելու Աստուծոյ քաղաքին պարիսպներն ու աւերակները, ակնկառոյց առ Յիսուս, որու շնորհիւ, իրրն առաջնորդ և պաշտպան հաւատքի, մեր մրցանքն ու համբերատար ճիգերը պիտի գտնեն իրենց յաղթանակը միութեան այն բաղձացուած նպատակին մէջ զոր Փրկիչը մաղթեց իրրն գերազանց օրհնութիւն մը իր բոլոր աշակերտներուն համար :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԻԻԹ. ՎԵՐԱԾԻՆՈՒԹԻՒՆ

ԿԻՐԱԿԻ. « Ահա ես ամէն ինչ նոր կը շինեմ » : Յայտ. 21. 5.

Ն. Ս. ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ. « Մարութը եղիք, դուք որ Տէրոջը ամանները կը կրէք » : Ես. 52. 11.

ՎԵՐ. Գ. Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ԵՐԵՅՄԱԲԹԻ. « Զօրաւոր եղիք Տէրոջմով եւ Անոր կարողութեան ուժովը » :

ԵՓՐԵՄ ՎԱՐԳ. ԱՍԻԼԵԱՆ

ԶՈՐԵՅՄԱԲԹԻ. « Ելնենք, եւ շինենք » : Նէյէմիա 2. 18.

Պ. ՍԹԵԼԻԱՆՈՍ ԱՅԱՆ ՕՂԼՈՒ

ՀԻՆԳՇԱԲԹԻ. « Նայելով Յիսուսի » : Երր. 12. 2.

ՏՐ. Վ. Ն. ԶԷՄՊԸՐՍ

ՌԻՐԱԹ. « Որպէսզի անոնք մէկ ըլլան » : Յովն. 17. 21.

ԱՊՈՆԱ ՐԱՀԱՊ ԵՌՆԱՆՆԱ

ԵՐԱԺՏՏՈՒԹԻՒՆ՝ ղեկավարութեամբ ԲՐՕՅ. Ղ. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ

Պետք չէ՞ միթէ այս բանին մէջ նկատենք նախանշանը աճեցուն սրտակցութեան մը և քրիստոնեական լարեկամեցողութեան և զործակցութեան ներշնչումի մը՝ այն բոլոր ձեռնարկներուն մէջ որոնց նպատակն է առաջացնել ճշմարտութեան և արդարութեան արքայութիւնը որուն իրագործումին համար մենք բոլորս կ'աղօթենք,
« Որպէս զի անոնք բոլորը ըլլան մէկ » :

Յ Յունվար 1921

ՈՒ. ՆԷՍՊԻԹ. ԶԷՄՊԸՐՍ

ԱՏԱՆԱ (Կիլիկիա)



Ն. Մ. ՕՇՇՈՒՓԻՒՆ ՍԱՀԱՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՏԱՆՆ ԿՐԼԻԿԻՈՅ

« ԱՀԱ ԵՍ ԱՄԷՆ ԻՆՁ ՆՈՐ ԿՐ ՇԻՆԵՍ »

ՅԱՅՏ. 21. 5.

(ՊԵՂ. ՍԱՀԱՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ)

Թէև բեմը իմա չէ՛, բայց նիւթը իբրև Աստուծոյ խօսք իմա և ամենուր է։ Աստուծոյ խօսքը բեմ չունի, ամեն ուրեք, ապառ և անապառ, դաշտ ու լեռներ, ծով և ցամաք Աստուծոյ խօսքին բեմերն են։ Օրուան նիւթն է՝ ԱՀԱԻԱՍԻԿ ԶԱՄԵՆԱՅՆ ԱՌՆԵՄ ՆՈՐ։

Շնորհակալութիւն երիտ. Բրիտ. Ընկերակցութեան, որ մեզ պատենութիւն ընծայեց չարաթական աղօթից առաջին օրը մի քանի խօսք ուղղել քրիստոնեայ երիտասարդներուդ, թէև ծեր երիտասարդներ ալ կը տեսնեմ, որ կեանքի նորոգութեան բարեգուշակ ապացոյց մի է։

Չեմ կարծեր թէ Ն. Բ. Ը. ի չարաթական աղօթքները թեւադրութիւն մի ըլլան երիտասարդաց՝ աղօթքի պարտաւորութիւնը սահմանուած օրեր միայն կատարելու։ Բոլոր քրիստոնեայ եկեղեցիները առօրեայ պաշտամունքներէն զատ՝ ունին մասնաւոր օրեր, աւելի հանդիսաւոր և չինիլ ընելու պաշտամունքը։ Այս նպատակու է եւ Ն. Բ. Ը. ի չարաթական աղօթքը։

Աղօթքը օր և սահման չունի, մանաւանդ Բրիտոսի

բացորոշ պատուէրը «Աղօթեցե՛ք որպէսզի փորձաքանակ
վեջ չիջնա՛ք», և Պօղոս Առաքեալի ուժգնապէս շեշտուած
խօսքը «Աղօթից ւսեալ կացի՛ք», կը պարտադրեն զմեզ ա-
ղօթել և միշտ աղօթել, ո՛չ միայն փորձութեան պահն-
րուն, ո՛չ միայն վտանգի և օրհասի ժամերուն, այլ աղօթել
մեր բաղդաւորութեան և երջանկութեան մէջ, այլ միշտ
աղօթել և գոհութիւն մատուցանել Աստուծոյ, «զի աւնե-
նայն տուրք բարիք եւ աւնենայն պարգևիք կուսարեալք ի
վերոս եւն իջեալք»:

Չեմ գիտեր թէ ի՞նչ կը հասկնաք երիտասարդներ,
աղօթք բառով. եթէ կը կարծէք թէ միայն եկեղեցի կամ
ժողովարան յաճախելով, կամ երկու խաչ հանելով ու պահ-
մի աչքերնիդ փակելով աղօթքի պարտաւորութիւնը կա-
տարած կ'ըլլաք. եթէ կը կարծէք թէ վարդապետին կամ
պատուելիին և կամ նոյն իսկ իմ խրատականներս լսելով՝
աղօթած կ'ըլլաք, կը սխալիք և այդ սխալը շատ վտան-
գաւոր է հոգեւոր կեանքի նորոգութեան համար: Աղօթ-
քը ծէս և արարողութիւն ըլլալէ աւելի հոգի է և հոգեւոր
կեանքի նորոգութիւն. ծէս և արարողութիւնը աղօթքի
մակերեսը, կամ պարզապէս մարմինն է. իսկ անհոգի մար-
մինները հայկական դիակ բառով կ'որակուին: Աղօթքը
հոգիի վերացումն է, կամ եթէ աւելի հաճոյական և բա-
նասեղծական բառ մի գործածել ուզէի, հոգիի սաւառ-
նումն է առ Աստուած, սակայն մեր ամենուս սիրելի եւ
ամենուս ծանօթ միանձնաւոր Գրիգոր Նարեկացին այս-
պէս սահմանած է աղօթքը՝ «Խօսի ընդ Աստուծոյ»:

Խօսիլ Աստուծոյ հետ, կը նշանակէ Աստուծոյ մօտե-

նալ և զԱստուած տեսնել: Երանի՛ այն քրիստոնեանե-
րուն, որ զԱստուած կը տեսնեն, Աստուծոյ կը խօսին և
Աստուծոյ կ'աղօթեն: Այս՝ աղօթքի տեսլական և բնա-
զանցական նշանակութիւնն է. ունի աղօթքը բնական և
բանական նշանակութիւն: Աղօթքը կեանք և գործք է:
Եթէ ունիմք կեանք ըստ ամենայնի անարատ բնական եւ
բարոյական խստերէ, կեանք՝ նուիրուած անհատական,
ընկերական և քրիստոնէական պարտաւորութեանց, այդ-
պիսի կեանքը ինքնին աղօթք է:

Ուստի կը պատուիրեմ Պօղոս Առաքեալին հետ.
«Ապրեցե՛ք զգաստութեամբ, արդարութեամբ եւ աստուած-
պաշտութեամբ», որպէսզի աղօթքի կեանքը ապրիք: Ի
զո՛ւր են մեր լալահառաչ աղերսները յօտին, կամ ծնկա-
չօք, և կամ գետնամած, ի զո՛ւր են մեր կոծումները և
կրծոց բաղխումները, եթէ մեր կողքին կը տեսնեմք մեր-
կութենէ զոգահար և անօթութենէ կիսամեռ որբը և այ-
րին և անտարբեր և անսիրտ ու անզգած կը մնանք: Հազ-
ցենք մերկերը, կերակրենք քաղցածները և պատսպա-
րենք անտուն և անապաւէնները, ահա՛ մեր այս գործ-
քերը կ'ըլլան խնկաբոյր աղօթք և հաճոյական պատարագ:

Եթէ Առաքեալի պատուէրին համաձայն ապրինք
զգաստութեամբ, չուայլ ու չուայտ կերուխումներ, արբե-
ցութիւնք, անառակութիւնք, ցօի և անբնական կենցաղ,
անհաշիւ արդուզարդ պաճուճանք և անհարկի ու դատա-
պարտի զբօսանք ու զուարճութիւնք տեղի չը պիտի ուն-
ենային: Ըստ Սուրբ Գրոց Նոյի օրերուն մարդիկ, եւ
այնուհետեւ Սողոմի և Գոմորի բնակիչք անզգաստութեամբ

կ'սպրէին. Աւետարանի բառերով՝ ուսեիւն, շնորհեիւն, ճնկեիւն, կուսաշուստեիւն եւ արանց շնորհեիւն. այս պատճառաւ մին և միւսը ջրհեղեղով և երկնատեղաց կը բակով բնաջնջուեցան :

Եթէ մարդիկ արդարաւրեւաւ ապրին, զրկանք, հաւածանք, կեղեքմունք, կաշառք, անիրաւութիւնք, խարդախութիւնք ի չարիս և 'ի կշիռս, նախանձ, օխ, և չարակնութիւնք տեղի չը պիտի ունենային. ամէնքը իրենց արդար վաստակով պիտի բաւականանային : Սակայն նախկին հօգը և աշխարհակալ պետութիւններ, հոյակապ քաղաքներ, Նինուէի և Բաբելոնի նման, և աշխարհոջակ շահատաններ, Սիդոնի և Տիւրոսի, ըսեմ և կարեկցոնի նման անարդար կեանքով կործանեցան և բնաջնջուեցան :

Եթէ մարդիկ արդարաւրեւաւ ապրին, անգլխատ և անիրաւ կեանքը գոյութիւն չը պիտի ունենար : Եթէ Աստուծոյ սէրը զօրաւոր և իրական ըլլայ մարդկանց մէջ, աշխարհակալութեան ոգին՝ տիրող չէր ըլլար. ազգեր և փոքրութիւններ իբրև վայրենի զաւաններ զիրար չէին փողոտեր : Քառամեայ պատերազմը և աշխարհի արդի քառասային վիճակը կեղծ աստուածապաշտութեան, կեղծ ընկերակցութեան և ըսեմ կեղծ ընկերակցութեան դառնադոյն պտուղներն են :

Սիրենք զԱստուած և միայն անոր նուիրենք մեր հոգին իր բովանդակ կարողութեամբ : Սուրբ Օգոստինոս ըսած է, «Սիրես զԱստուած եւ արա՛ գինճ եւ կաւիս» : ով Աստուած կը սիրէ աւելի քան զաշխարհ, չը կրնար խորհել, գործել և զգալ Աստուծոյ կամքին հակառակ : Եւ այն

ատեն երկիրը պիտի ստանայ այն կոյս վիճակը, զոր ունէր երբ Աստուած յօնչէ յէութիւն կոչեց և տեսաւ որ ամենայն ինչ բարի են. բարի էին բոլոր ստեղծուածք, բարի էին անապատի զաւանները և երէ վայրիներ, բարի էին թռչունք երկնից, սողունք և լուղակք, բարի էր և մարդը և երկիր համայն դրախտ աստուածատունկ : Որչափ մարդը բարի մնաց, նոր ու գեղեցիկ էին երկինքն ու երկիրը :

Դժբաղդաւար դրախտային այդ երանաւէտ կեանքը երկար չի տեւեց. կայէն, եղբայրասպաններու նախահայրը իր հարազատը սպաննեց և երկիրը առաջին անգամ մարդու արինը ծծելով հնացաւ և անզգամացաւ : Անզգամացան զաւանք, թռչունք և մարդիկ : Աստուծոյ սիրոյն տեղ մարդկային եւր թագաւորեց և աստուածացաւ. նահապետք, մարգարէք և ողջամիտ փիլիսոփաներ երկրի հնութենէն տաղտկացած՝ իրենց տեսիլներուն և վերացումներուն մէջ կը բաղձային նոր երկրի մը, ուր գայլ և գառինք միասին պիտի ճարակէին, ուր եղն ու առվծը յարդ պիտի ուտէին և ուր վայրի ու ընտանին մէկտեղ պիտի մակաղէին : Ամէնքն ալ նոր երկրի մը ստեղծագործութեան սուրբնը պատակին զո՛հ եղան :

Միթէ մենք, որ ամէն օր արինն արցունք կուլանք, ամեն օր ցաւք, տառապանք, տաքազրութիւն և քաղց ու մերկութիւն խեղդամահ կընեն զմեզ, չենք բաղձար նոր երկրի մը, նոյն իսկ նոր երկնքի մը, որովհետեւ կարծես հընացեր են արեւն ու աստղեր, կարծես իրենց անքթիթ աչքերով հեգնանքներ են մեր խաչակրութեան և մարտիրոսութեան : Մեծ Տեսանողն, Յովաննէս, կամ իր տառա-

պանքներէն ի Պատմութեան կողմէն և կամ դարերու մթութեան մէջէն արծուօրէն տեսնելով աշխարհի հնացեալ և քայքայեալ վիճակը՝ կ'աւետէ նոր երկնքի և նոր երկրի մը ստեղծագործումը։ Եւ Աստուած ինքն է որ կը խօսի իր սիրելիին.— «Ահաւասիկ արարից զամենայնս լոռ», երկինք նոր, երկիր նոր և մարդիկ նորոգեալ։ Եւ այն ատեն սուրբ քաղաքը Երուսաղէմ երկինքէն երկրի վրայ պիտի իջնէ ու Աստուած իր փառքի խորանը երկրի վրայ պիտի հաստատէ, լացող աչքերու արցունքները պիտի ցամքին. ո՛չ ևս մահ, ո՛չ ևս սուգ, կոծ, ցաւեր ու աշխատանք։ Դրախտային կեանքը, որ մարդուն բնական և սահմանեալ վիճակն է, նորէն պիտի սկսի իր բոլոր վայելչութեամբ և փափկութեամբ։

Քրիստոնեայ երիտասարդներ, մի՛ զարմանաք եթէ աւելցնեմ, որ նոր երկինքը ու երկիրը մենք պիտի ստեղծագործենք, որովհետեւ Աստուած երբ աւարտեց ստեղծագործութեան մեծ գործը, մեզ յանձնեց այդ նուիրական պաշտօնը գործելու եւ պահելու պատուէրով։ Առաքեալն ալ նոյնը կը հաստատէ «Գործակից լոռ Աստուծոյ» խօսքով։ Մենք չը գործելով և չը պահելով հնացուցիւք երկինքն ու երկիրը, աւելի ճիշտ, մենք հնացանք։ Կը տեսնէք, յորէ ստեղծագործութեան երկինքն ու երկիրը նոյն են, անշուշտ և անմուռն թովանդակ բնութիւնը աստուածասահման օրէնքով կ'ընթանայ. ամեն սերմ և ծառ իրենց յատուկ սերմը և պտուղը կուտան, չեղաւ ատեն մի, որ փուշը խաղող և տառասկը թուղ պտղաբերէին, տիւ և գիշեր, չորս եղանակներ անխոտոր իրարու կը յաջորդեն,

աբեւներ և աստղեր իրենց դերին մէջ անսայթաք ու առանց իրարու զարնուելու կը հոլովին և կը թաւալին. մարդը միայն խոտորեցաւ իրեն համար սահմանուած կեանքէն և օրէնքէն. մարդը միայն հակառակ բնութեան երբեմն հրէշներ կ'արտադրէ. հետեւաբար մարդն է միայն հնացեալ, կամ ըստ Դաւթի, մարդը անզգամացաւ և ըսաւ իր սրտին մէջ, ո՛չ գոյ Աստուած, ամենքն ալ խոտորեցան և անպիտանացան և իրենց անիրաւ գործերով ապականեցին երկիրը և ոչ ոք է, որ առնէ զբարի։

Պօղոս Առաքեալն, հնացեալ մարդը այսպէս կը նշկարադրէ, զԱստուած ճանաչեցի՛ն եւ իբրեւ Աստուած չը փառաւորեցի՛ն, այլ իրենց խորհուրդներուն մեջ եւ իրենց սրտերը անհետքեալք խաւարեցան։ Իրենք գիտեմք իմաստունի ճեղղի՛ն եւ յիմարեցան եւ անեղծ ին Աստուծոյ փառքը փոխեցին և նմանցուցին մարդու, թռչուններու և չորքոտանիներու եղծանելի պատկերին։ Եթէ այս նկարագիրը գոնէ մասամբ մեր նկարագիրն է, ինչո՞ւ նոր երկնքի և նոր երկրի անկալութիւն ունինք։ Եթէ մենք անփոփոխ և հնացեալ մնանք, նոր երկիրը միթէ՞ զմեզ կը փոփոխէ և կը նորոգէ։

Ապա յայն պիտի առարկէք, Մարգարէին և Առաքեալին նկարագրած մարդկութիւնը նախկին և հեթանոս մարդկութիւնն էր. մենք հեթանոսներ չենք, մենք չենք պաշտեր մարդը, թռչունը և չորքոտանիները. մենք քրիստոնեայ եմք և կանչուած 'ի փրկութիւն։ Դարձեալ մարդկային սընտապարծութիւն, մարդկային խորհուրդներու նանրութիւն և սրտերու անմտութիւն։ Անուամբ քրիստոնեայ եմք.

գործքերնիս քրիստոսի՞նն է. քրիստոնեայ սուրբ ծածկոյ-
թին տակ հին խմորը կը նեխի և կ'որդնաի. հին մարդն
է որ կը գործէ իր բոլոր ապականութիւններով, եթէ գոր-
ծով, հողիով, խորհուրդներով և զգացմամբ խակալէս քրի-
ստոսին նմանող լինէինք, պէտք չէր մնար այն աշխա-
տութեանց և զոհողութեանց, զոր կ'ընէ Ե. Ք. Ը. ն և
զոր կ'ընեն ուրիշ բարենպաստակ հաստատութիւններ:

Յուսահատի՞նք իրաց այս ցաւագին կացութեան
հանդէպ. ո՛չ, յուսահատութիւնը անհաւատութիւն և մահ
է. աշխատինք և հաւատանք, որ շնորհիւ քրիստոնեայ ե-
կեղեցիներու ջանքերուն, շնորհիւ ողջամիտ կրթութեան
և դաստիարակութեան պիտի գայ այն երջանիկ օրը, յո-
րում նորոգեալ մարդկութիւն մի պիտի յաջորդէ մեզ և
հնացելոյն, յորում տառապանք, ցաւք, անիրաւութիւնք և
ամէն կերպի և ձևի մեղքեր անհետ պիտի ըլլան և յորում
մարդիկ առանց ցեղային, կրօնական և դաւանաբանական
խտրութեանց տիեզերական եղբայրութիւն մի պիտի կազ-
մեն և Աստուած յերկնից տեսնելով սիրոյ կրօնի թաղա-
ւորութիւնը, իր փառքի խորանը երկրի վրայ պիտի հաս-
տատէ և ինքն 'ի մարդիկ և ընդ մարդկան պիտի բնակի և
պիտի ըսէ. Ահաւասիկ արարի զամենայն նոր: Մաղթենք,
որ Աստուծոյ Հոգին նորոգէ զմեզ և ակնկալեալ երջանիկ
օրը շուտ հասնի:







